8. ԱՎՉԻ ՄԱՆՈՒԿ

Մե թագավոր կրլնի, էտոր ունի մեկ տղա, հինգ տարեկան տղա։

Էտ քաղքի մեջ էլ մեկ հատ պառավ կրլնի։ Էտ պառավը կէրթա թագավորեն փող գուղե։ Թագավորը էտոր փող չի տա, էտ էլ գրյնի թագավորի խետ ներհակ, կասա. «Էնպես մե բան բերեմ գրլխուն, օր շիվարի թագավորը»։

Կէրթա մե օր թագավորի տղեն կրգողնա, կը տանի կրքցա մեշեն, օր ջանավարները ուտեն։ Մե գել կուգա կրվերցու կրտանա. էտ տղեն օր ուտա։

Մե ավչի Մանուկ կրլնի, էտի կրտեենա օր գել պիտի էտ տղին ուտա, թվանքն կը քաշա, կը ղանա գիլուն կսպանա. տղեն կը վերցու կրբերե իրա տուն։

Էստուն թագավոր կտեենա օր իրան տղեն չկա, գրյնի շուռ գալուն։ Կիգան էտ ավչի Մանուկի գեղը, հարցմունք կանա թե. «Էսպես տղա է ընծի կորե, որն օր ընծի տվեց, պարգև կիտամ էնոուր»։

Ավչի Մանուկ լսեց թե՝ էսի թագավորի տղա ա, ասավ. «Տանիմ տամ իրան»։

Տարավ տվեց իրան, թագավոր շատ ուրախցավ, ըսաց.

— Գնա, առավոտ արի, քու պարգև տամ։

Թագավոր գիշերվա մեջ առավ ուր տղեն, ետ դարձավ, էկավ իրան տուն։

Առավոտուն ավչի Մանուկ էկավ տեսավ օր թագավոր քոչեր ա,

մեկ հատ քոլոզ կար, մեկ հատ կտոտուկ քիսիկ, մեկ բըլուլ[1]։ Ավչի Մանուկ վերցուց ըսաց. «էս քոլոզը կըտանեմ, կը գնամ գլոխս, թե ոանչպար էղա, էս քիսիկ լե կը տանեմ, կը կարեմ յախիցս, էս բըլուլ լե կը տանեմ կը փչեմ՝ թե չոպան էղար։

Ետո շուշի կտորտանք կար, վերցուց թալեց իրա քիսիկ, ըսաց. «էս ա տանեմ էնեմ աղաթաս»։ Վերցուց էտ իրեքը էկավ իրա տուն։

Մերն հարցուց թե.— Թագավորն ի՞նչ պարգև տվեց քեզի։

Էսաց.— Էս քիսիկն կար էնտեղ, էս քոլոզն, մե հատ էլ բըլուլ։

Մերն էսաց.—Հան տենամ ի՞նչպես քիսիկ ա։

Ավչի Մանուկ հանեց ծոցից քիսիկ, տվեց մորն.— Հ՝ըպա, առ,—ըսեց,—շուշի կտորտանք կա մեշը, մեզի կէնենք աղաթաս։

Մերն առավ, քիսիկի բերան բացեց, տեսավ օր հ՝ըմեն անգին քար էր։

Մերն էսաց.—Տե՜ս, օրթի, թագավորը սուտ ասած չէ, հ՝ըմեն անգին քար ա։

Ավչի Մանուկ շատ ուրխըցավ, մեր շատ ուրխըցավ, ըսաց.

— Բեր տենանք քոլզի հունարն ի՞նչ ա։

Ավչի Մանուկը առավ գրեց իրա գլոխն, մորն աչքին չէրևաց էլ։

Մերն էսաց.—Ավչի Մանուկ, դո՞րն ես, իմ աչքին չես էրևա։

Ավչի Մանուկն ըսաց.—Ըստեղ եմ, առաշգ կայնուկ, չե՞ս տեսնա։ Էսի քանց քիսիկն լավ ա, ղյուշմնի հախեն կը գամ։

Մերն ըսաց.— Բըլուլը բե տենանք էնտոր հունարն ի՞նչ ա։

Ավչի Մանուկ բըլուլը բերեց, գրեց բերնին փչեց, քառսուն արար՝ թոփուզներ ձեռն, ձեն տվին, ասին.

— Ավչի Մանուկ, աշխարհք քանդե՞նք, թե՞ շիկենք։

Ավչի Մանուկ ըսաց.— Ո՞չ քանդեք, ո՞չ շինեք. էնպես հանդարտ մացեք։

Քառսուն արարը աներևույթք էղան։

Ավչի Մանուկ ըսաց.— Էսի ամենուց լավ ա։

Ետո մերն ըսաց.—Մանուկ շան, էս անգին քարուց մեկը տանենք խուրդենք։

Պառավը վերուց քարը, տարավ քաղաք խուրդելու։ Տարավ զառաֆի մոտը։ Զառաֆն իշկեց, տեսավ, ըսաց.

— Պառա՛վ, ես ըստուր գին չեմ կանա տա, գնա մե ծանդր սառաֆ կա, էնտոր մոտը։

Պառավը վերցուց քարը, գնաց ծանդր սառաֆի մոտ։ Գնաց ըսաց.

---

1 Սրինգ (Ս. Բ.)։

— Առ իտա քար խուրդա։

Սառաֆն առավ քարն իշկեց, ըսաց.— Էտոր գին չըմ կրնա տա։

Պառավն էսաց.—Ինչ կրնաս՝ տուր։

Սառաֆը բերեց, ինչ օր կար չկար տվեց, մե բան էլ մնաց պակաս։

Պառավ վերցուց փող, առավ էկավ տուն։ ուրանց հըմար շինութեն շինեցին տան մեջ, ի՛նչ կա չկա՝ դրստեցին։

Ավչի Մանուկ եռսուն ձի առավ, էղավ բազրկան, ճոթ բարձավ տարավ ուրիշ քաղքներ ծախելու։

Գնաց մե թագավորի քաղաք դուս էկավ, մե շինութեն առավ, ուր ապրանք լցեց մեջն։

Բերեց մեկ խոնչա պատրաստեց թագավորի հըմար, օր տանիր տեսութեն։ Իրեք հատ անդին քար դրեց մեջը, տարավ թագավորին. Էրկու խոնչա էլ՝ ուրիշ։

— Բաղրկան է բերե։

Թագավորը վաղիրին ըսաց.— Ե՛լ էս խոնչեքը բաց, տես։

Վաղիրը հ՝ելավ խոնչեքը բացեց, տեսավ. էրկու բազրկանին, Ւամփու դրեց, գնաց։ Ավչի Մանուկի խոնչան պախեց, բերեց տվավ թագավորին, ըսաց.

— Բա՛ց տես էս խոնչան։

Թագավորը բացեց տեսավ օր իրեք հատ անգին քար կա մեջը, ըսաց.

— Վազի՛ր, էս խոնչի դեմը ի՞նչ տանք էս բազրկանին, օր Էրթա ուր ծախսն էնա։

Վազիրն էսաց.— Քո թագավորութեն էսի չի հանե, իսանին՝ դին չունի, արի քու աղչիկ տու ըդրան։

Թագավոր լսեց վազիրի խոսքն, էսաց.— Աղչիկս տվի քեղի, գնա քու առուծախսն էրա։

Տղան հ՝ելավ էկավ իրա առուծախսն էնելու։ Աղչիկը լսեց, օր թագավորը իրան տվեր ա մե բազրկանի, դարձավ մորն էսաց.

— Էն տղեն բերեք ես տեսնիմ։

Մեր գնաց թագավորին էսաց, թե՝ աղչիկ տղին կուզա տեսնի.

Թագավոր մարդ ղրկեց տղին, թե՝ հ՝իգա ուր նշանած տեսնի։

Ետու տղեն շատ ուրխըցավ, բերեց մե խոնչա պատրաստեց, իրեք հատ անգին քար դրեց մեջ, իրկուն գնաց թագավորի աղչկա մոտ։

---

1 Մարդուն (Ծ. Բ.)։

Թագավորի աղջիկ տեսավ օր նշանածն էկավ, իշկեց դուր չէ-կավ, ըսաց.—Արի նստի ըստեղ։

Տղեն խոնչեն դրեց թագավորի աղջկա հ'առեջ, նստավ։ Թա-գավորի աղջիկ խոնչեն բացեց, տեսավ իրեք հատ անգին քար կար մեջ, դարձավ տղին հարցուց թե.

— Տղա՛, էս քարեր հ'ու՞սա ա։

Տղեն քիսեն հանեց ծոցից, ըսաց.

— Ինչ ղտար խամ քար կա, բեր շինեմ անգին քար։

Թագավորի աղջիկն ըսեց ուր ջառիկներուն[1].

— Էնտե շուշի կտորտանք կա, բերեք տենանք իմալ կէնեք անդին քար։

Ջառեք շուշի կտորտանք բերին տվին տղին. լցեց իրա քիսիկն, էղավ հ'ըմեն անգին քար։ Թագավորի աղջիկն ուրին գրեց քաղց-ուրթեն, ձեռք քցեց տղի վզով, էսաց.

— Աղջիկնե՛ր, հաց բերեք, ուտինք, իմ նշանած էկեր ա։

Բերին հաց դրին, թագավորի աղջիկն էսաց.—Աղջիկներ, ամենք մե-մե թաս տա իմ նշանածին խմա։

Էտ ջառեք մե-մե թաս տվին էտ տղին, խմեց։ Խմեց, տղեն քեֆոֆցավ, հ'ետո թագավորի աղջիկն էսաց.

— Էն քիսիկն տա՞ս ընծի։

Տղեն քեֆն հասավ, քիսիկն հանեց տվեց թագավորի աղջկան, թագավորի աղջիկը քիսիկը պահեց, ձեն տվեց իրա ջառեքներուն, էսաց.

— Տփե՛ք էս տղին, թալեք դուս։

Ջառեք տղին տփեցին, հանեցին դուս, տարան քաղքի ղրաղ թալեցին էկան։

Տղեն էտեղ մնաց չուր լուս բացվավ։ Լուս բացվավ՝ տղի ուշքն էկավ վրեն, տեսավ օր ուր գլոխ ջարդած էր, ուր շորեր հ'ըմեն ճղրտուկ էր, էսաց.

«Էլ էրթամ դուքան ի՞նչ էնեմ,— ըսեց,— էրթամ իմ տուն»։

Հ'ելավ էկավ ուր տուն, էկավ մեր տեսավ, էսաց.

— Ավչի Մանուկ, էտ ի՞նչ ա քու հալ։

Տղեն էսաց.— Գացի էղա թագավորի փեսա, թագավորի աղջիկ էս օյին հանեց գլոխս. իմ քիսիկ ծոցիցս առավ, հիմիկ էկեր եմ, օր քոլող տանեմ, բալքի իմ քիսիկ բերեմ։

---

[1] Աղախիններին (Ս. Բ.)։

Մերն հարա.— Չե՛ս կարա բերե,—էսաց,—քո մոտեն քոլողն էլ կառնի։

Չէ՛,—ըսեց,—էս խետ չեմ խաբվի։

Էլ մերն ձեն չէրեց, առավ քոլող, գնաց տղեն։ Գնաց էն Թագավորի քաղաք. գնաց ուր դուքան բացեց նստավ. կեսավուր մոտ քոլող դրեց գլոխ, դնաց նշանածի մոտ։ Քոլող գլոխն էր, նշանածը չտեսավ։

Ուրին[1] նշանածը Թե.— Հաց բերեք ուտեմ,— էսաց։

Ջառեք հաց բերին դրին։ Թագավորի աղջիկ նստավ ուտելու։ Աղջիկը չուր մե գդալ կերավ, ավչի Մանուկ նստավ կողք հ'ըմմեն կերավ։ Թագավորի աղջիկ տեսավ օր տարելքը դարդրկվավ, ինք հրլա մե բրդուճ է կերե, ձեն տվեց Թե.

— Ի՞մալ հաց կը բերեք, կերակուր չատ բերեք։

Ջառեք նորեն կերակուր բերին։ Թագավորի աղջիկ տեսավ օր մե բրդուճ կերավ, էլման տալերքը դարդրկվավ։ Աղջիկն հ'իմցավ օր էսի իրա նշանածի բանն է, ձեն տվեց, էսաց.

— Ավչի Մանուկ, ես քըզի փորձեցի, աչքիս էրևա, տեսնեմ ի՛նչ կըսես։

Ավչի Մանուկ ուր քոլոզ ուր գլխեն իջուց։ էրևաց Թագավորի աղջկա աչքին։ Թագավորի աղջիկ ուրին դրեց դոստուքեն, ձեռք ցկեց տղի վզով, ըսաց.—Ես քեզի փորձեցի՝ տեսնեմ հունար ունի՞ս։

Տղեն էսաց, Թե.— Հունար ունիմ, բա չունի՞մ. իմ քիսիկ իմ մոտից ինչի՞ առար։

Թագավորի աղջիկ էսաց.— Ես չեմ առե. էս ա քու քիսիկ, քու բան պետք ա ես պախեմ։ Դու է՛ն ըսա, էն ի՞նչպես դու աներևույթք դարձար, իմ աչքին չըր էրեի։

Ավչի Մանուկ էսաց.— էս քոլզի հունարն էր, օր էս քոլող դնեմ գլոխս, էլ մարդու աչքին չեմ էրևա։

Աղջիկն էսաց.—Տուր հրլը տենամ։

Ավչի Մանուկ խաթրեն չհ'ելավ, տվեց քոլոզը։ Աղջիկը առավ, ձեն տվեց ջառեքներուն, ասեց.

— Ես ձեզի կըսեմ՝ տարե՛ք էս տղին ըսպանեք, մի՛ թողեք ապաղ մնա։

Ջառեքը վերցրին տղին ջարդելով տարան։ Տարան քաղքեն դրաղ մե խանդակի մեջ թալեցին, էկան։ Սապախտան արևն էղավ

---

1 Ցուրյան (Ս. Բ.)։

կևսօր, տղեն նոր օյախցավ[1]։ Օյախցավ, ինքն իրեն միտք էրավ։. էսաց. «Ես դուքան էրթամ ի՞նչ էնեմ. արի էրթամ տուն, բըլուվ բերեմ. կէղնի օր էնի մեկ բան էնա»։

Տղեն էկավ դնաց իրա տուն։ Մեր տեսավ, օր տղի գլուխ ջարդուկ ա, տղի շորեր ճղրտուկ ա, ձեն տվեց էսաց.— Մանուկ, էտ քու հալ ի՞նչ ա։

Տղեն էսաց թե.— Թագավորի աղջիկը էսպես օյին հանեց իմ գլուխ, իմ քոլոզն իմ մոտիցս առավ,— ասեց,— մեր,— ասեց,— էկեր եմ, օր բըլուվ տանեմ, բալքի իմ քիսիկն ու քոլոզ բերեմ։

Մեր, բա՛, ասեց.— Որդի ջան, բըլուվն էլ մոտեդ կառնի, մի՛ տաներ։

— Չէ՛,— ասեց,— ըստուր չեմ խափվի։

Առավ բըլուվ գնաց։ Տղեն առավ բըլուվ էկավ, քաղքի ղրաղ նստավ, բըլուվ փչեց։ Փչեց, քառասուն արաբ՝ թուփուզներ ձեռ, կայնան։ Կայնան ասին.— Քանդե՛նք աշխարհք, թե չի՛կենք։

Ավչի Մանուկ էսաց.— Քաղքի մե ղրաղ քանդելով արեք։

Արաբներ տներ քանդելով գնացին։ Թագավորի աղջիկ տեսավ, օր քաղաք քանդեցին, ասեց ջառեքուն.— Գացե՛ք էն տղին բերեք։ էսի ընտոր գործ կըլնի։

Ջառեքը գնացին գտան, ասին.— Թագավորի աղջիկ քըզի կըխանչա։

Ավչի Մանուկ բըլուվ խանեց բերնից, արաբներ հանդարտան, ինք հ'ընկավ ջառեքի հ'ետև, էկավ թագավորի աղջկա մոտ։ Թագավորի աղջիկ հ'ելավ կայնավ գնաց մոտ, ձեռք բռնեց, էսաց.

— Արի, էտ ի՞նչ բան ա կէնես դու. թագավորը լսեց՝ իմ գլուխ կը զանա։ Ես քեղի կուզի փորձեմ, տենամ հունար ունի՞ս։

Ավչի Մանուկ ձեն տվեց, էսաց.— Իմ քիսիկ, իմ քոլոզ տուր, դամ նես։

Ախչիկ վերցուց թե.— Արի տամ։

Մանուկը գնաց, աղջիկը ձեռ ձգեց, Մանուկի վզով, Մանուկի երես պագեց, էսաց.— էտ ի՞նչ կէնես, դու գուզես ընծի տաս ըսպանե՞լ։ Ետո էսաց.— էտ ինչո՞վ էր էս քաղաքը գու էտպես ավերեցիր։

Ավչի Մանուկ հանեց բըլուվը, էսաց.— էս բըլուվովն էր։

— էտոր հունարն ի՞նչ է,— էսաց աղջիկն։

էսաց.— Օր դնեմ բերնիս փչեմ, հունարը կը տենաս։

---

1 Ուշքի եկավ (Մ. Բ.)։

Էսաց.— Հըլը դի աենամ։

Դրեց բերանը փչեց. քառսուն արաբ թոփուզներ ձեռը կայնած, ըսին.

— Ավչի Մանուկ, աշխարհք քանդեն՞ք, թե շիկենք։

Թագավորի աղջիկ ձեն տվեց.— Յամա՜ն, ես կը վախեմ, էգ ի՞նչ բան ա։

Ավչի Մանուկ բերնից հանեց, արաբները կորան։

Թաղավորի աղջիկն էսաց.— Հըլը տու ես էլ փչեմ, տենամ իմ փչելուն էլ կիգա՞ն։

Ավչի Մանուկ խաթրեն չելավ, տվեց։ Թագավորի աղջիկը փըչեց. քառսուն արաբ թոփուզները ձեռք կայնան, ըսին.—Թաղավորի աղջիկ, աշխարհք քանդե՞նք, թե՞ շիկենք։

Թագավորի աղջիկ էսաց.— Ո՛չ քանդեք, ո՛չ շիկեք. էս տղին տարեք Սև ծովու ու Սպիտակ ծովու արան դրեք արեք։

Վերջին տղին տարան դրին էրկու ծովու արան ու էկան։

Տղեն մնաց էտ ծովու արան։ Սապախտան զարթավ, տեսավ օր չորս բոլոր ջուր ա, մնաց մոլըրած. իրեք օր ո՛չ կերավ, ո՛չ խմեց. հ՝ետո մե քիչ առաջ գնաց, հ՝երկան խնձոր գտավ. վերուց կերավ, տնկվավ գլխու վրա. իրեք օր էլ էտմալ տնկուկ մնաց։ Ետո գնաց կլոր խնձոր գտավ, էսաց։ «Իմ ջանիս հասե, էտ էլ պտի ուտեմ»։ Վերցուց կերավ՝ աղատվավ։ Հ՝ելավ կայնավ։ Աստծուն աղաղակեց, խանչեց աստված օր իրան էս նեղ տեղեն աղատա։ Աստված ձեն լսեց, հրեղեն ձին ծովուց դուս էկավ. էսաց.

— Մանո՜ւկ, էն խնձորներեն վերցու,— ըսեց,— ետո արի իմ քամակը, ես քեզի կհ՝ընցում ծովն էնթին։

Ավչի Մանուկ գնաց էրկու յայլուղ խնձոր ժողվեց, էկավ հրեղեն ձին հեծավ։ Հրեղեն ձին ծովն հ՝ընցավ։ Ծովն հ՝ընցավ, տղին դրեց գետին, լեզու հ՝ելավ, էսաց.— էտ հ՝երկեն խնձորներեն կը տանիս կը ծախես քու նշանածի վրա։

Առավ խնձորներն էկավ Մանուկը իրա նշանածի պալատի տակը, ձեն տվեց. «Լավ խնձո՜ր»։

Թագավորի աղջիկը լսեց, ջառին էսաց.— Գնա՛ մե քիչ առ բե։

Ջառեն գնաց առավ էկավ։ Թագավորի աղջիկը կերավ թե չէ՝ տնկվավ գլխու վրա։ Ջառեք թափան թագավորի աղջկա բոլորը, քաշեցին օտքերիցը օր պարզեն, չպարզվավ, էլի գլխու վրա տընկըված մնաց։ Ջառեքը բնբլե բարձերը բերին դրին գլխի տակը։

Աղջիկը էսաց.—Ջա՜նըմ էսի էլի էն տղի բաներն ա. գացե՛ք տղեն բերեք։

Ջառեք գացին տղի մոտը, գացին ըսին.— Թագավորի աղջիկ գլխի վրա տնկվե, արի աղատա։

Տղեն էսաց.—Գացե՛ք իմ քիսիկ, իմ քոլող, բըլուվ բերեք, նոր գամ աղատեմ։

Ջառեն դարձավ գնաց թագավորի աղջկան էսաց.— Տղեն ուր քիսիկ, քոլոզ, բըլուլ կուզա, օր գա աղատա։

Աղջիկը էսաց.— Հենա դոլաբն ա, տարեք տվեք, թող գա ընծի աղատա։

Ջառեն վերցուց քիսիկ, քոլող, բըլուլ, տարավ տվեց տղին։

Տղեն էսաց.— Գացե՛ք, էսօր չեմ կանա գա, առավոտ կիգամ աղատեմ, թո՛ղ մնա էնպես տնկուկ։

Մնաց առավոտ, նոր տղեն գնաց, առավ էն կլոր խնձոր, մտավ աղջկա մոտ, ջառեքին էրեց դուս, գիշեր մնաց մոտ, խնձոր տվեց աղջկան, կերավ, առավոտ շիտկավ. ըսաց.—Գնա քու առուծախս վերջացու, հ'ելնենք էրթանք քու էրկիր։

Տղեն հ'ելավ գնաց ուր առուծախս վերջացուց, առավ աղջիկ, գնաց ուր տուն։

Օխտն օր, օխտ գիշեր հարսնիք էրեցին։

Էն հասավ ուր մուրազին, դուն էլ հասնիս քու մուրազին։